

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2022-11-2-Ա

ք. Երևան

12.12.2022թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2022 թվականի դեկտեմբերի 12-ի նիստում քննարկեց 2022 թվականի նոյեմբերի 29-ին արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված՝ SPORT & FASHION MANAGEMENT PTE. LTD. (6 Shenton Way, #18-11 OUE Downtown 2 Singapore 068809, SG) ընկերության բողոքը «Flexzone 360» (IR1465047) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 45-րդ հոդվածի 8-րդ մասի 4-րդ կետի համաձայն ապրանքային նշանի գրանցումը մերժվում է, քանի որ հայտատուն ներկայացրել է տարբերակիչ հատկություն չունեցող տարրի նկատմամբ բացառիկ իրավունքի հայտարկումից հրաժարվելու մասին պետական լիազոր մարմնի համար անընդունելի առարկություն: Անդրադառնալով Ձեր կողմից ներկայացված նկատառումներին, ցանկանում ենք նշել, որ բացի այն փաստից, որ «360» թիվը որպես տարբերակիչ հատկություն չունեցող տարր ենթակա չէ առանձին գրանցման, այն նաև տվյալ դեպքում հանդիսանում է նկարագրական բնույթի, այն է՝ համադրվելով «Flexzone» գրառման «Flex» (թագմ.՝ ճկուն) սկզբնամասի հետ ենթադրում է, որ ապրանքները որոնց համար խնդրակրվել է ապրանքային նշանի գրանցումը կարող են ճկվել 360 աստիճան:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի դրույթները և հաշվի առնելով, որ հայտատուն հրաժարվում է «360» գրառման նկատմամբ բացառիկ իրավունքի հայտարկումից բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը գրանցելու մասին առանց «360» տարրին ինքնուրույն պահպանություն տրամադրելու:

Փորձաքննության բաժնի պետը նույնպես համաձայնվեց կոլեգիայի նախնական կարծիքի հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված՝ SPORT & FASHION MANAGEMENT PTE. LTD. ընկերության բողոքը «Flexzone 360» (IR1465047) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքն ամբողջությամբ բավարարել, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և «Flexzone 360» ապրանքային նշանը գրանցել «360» տարրին ինքնուրույն պահպանություն չտրամադրելով:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ